Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.**Անունը, ազգանունը**.

Գեղամ Վարդանյան:

2.**Զբաղեցրած պաշտոնը**.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3.**Գործուղման վայրը և ժամկետները**.

Իրաքի Հանրապետություն ք. Բաղդատ, ք.Էրբիլ 2019թ. հունիսի 17-20-ը:

4.**Հրավիրող կողմը.**

Իրաքի Հանրապետության կապի նախարարություն:

5.**Գործուղման նպատակը.**

Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում հայ-իրաքյան համագործակցությունն ընդլայնելու հնարավորություններն ու ուղիները քննարկելու նպատակով:

6.**Քննարկված թեմաները.**

2019թ. հունիսի 17-ից 20-ը Իրաքի Հանրապետության մայրաքաղաք Բաղդատում և Իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլում տեղի ունեցավ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ՝ Գեղամ Վարդանյանի գլխավորած պատվիրակության հանդիպումները՝ հրավիրող կողմի և ոլորտում շահագրգիռ մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ: Հայկական պատվիակության կազմում ընդգրկված («ԱրփիՆետ» հեռահաղորդակցական ընկերություն, InScope LLC, Quality Testing Lab, «Հայաստանի հեռուստատեսային և Ռադիոհաղորդիչ Ցանց » ՓԲԸ, «Արմիքս» հիմնադրամ, «Payandgo» ընկերություն) կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեցան ներկայացնել իրենց ձեռքբերումներն ու տեսլականներնը թվային տեխնոլոգիաների՝ էլեկտրոնային վճարային համակարգերի և պետական կառույցներում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման, թվային հեռուստատեսության

կիրառեիության և կրթության ոլորտը տեխնոլոգիական լուծումներով վերազինելու հարցերի հետ կապված:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի շրջանակներում նախարարի տեղակալը և նրա գլխավորած պատվիրակությունը հանդիպեցին Իրաքի կապի և տեղեկատվության նախարար դոկտոր Նայեմ Թ. Յուսիրի և փոխնախարար Ահմադ ալ-Բայաթիի հետ: Նախարարի տեղակալը իրաքյան կողմին ներկայացրեց հայկական գիտական ներուժը և հաջողված փորձը բարձր տեխնոլոգիական կրթության ոլորտում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձի փոխանակման ծրագրեր իրականացնել: Գեղամ Վարդանյանը նախարարին հրավիրել է մասնակցելու Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովին:

Պատվիրակության անդամները հանդիպում ունեցան Իրաքի Հանրապետության Բարձրագույն կրթության նախարարի տեղակալ դր. Սալամ Խոշնաուի հետ: Փոխնախարար Վարդանյանը խոսեց կրթական ոլորտում Հայաստանի արձանագրած հաջողությունների մասին այդ թվում նաև ինժիներիայի ռոբոտաշինության և հարակից ոլորտներում առկա մեծ փորձի և իրականցվող կադրային վերապատրաստման ծրագրերի մասին: Գեղամ Վարդանյանը հայտնեց իր գործընկերոջը, որ Հայաստանը պատրաստ է կիսվել իր փորձով՝ ոլորտային ծրագրերի ներմուծումից մինչև մասնագետների վերապատրաստման ծրագրերի իրականացում, ինչպես նաև արձանագրվեց, որ կողմերը կարող են համագործակցել այնպիսի հաջող հայկական պրոյեկտների շրջանակներում, ինչպիսիք են Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, Արմատ Ինժեներական լաբորատորիաները, հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաները (ANEL Project): Առաջարկ արվեց միանալ նաև մաթեմատիկայի և ալգորիթմիկայի, ֆիզիկայի, միկրոէլեկտրոնիկայի և ինժիներիայի, կապի ոլորտներում Հայաստանի կողմից իրականացվող կրթական ծրագրերին: Իրաքյան կողմն էլ իր հերթին ցանկություն հայտնեց իրականացնել ուսանողների փոխանակման ծրագրեր, ինչպես բակալավրիատի այնպես էլ մագիստրոսական ծրագրերի շրջանակներում: Իրաքյան կողմը կարևորեց հայկական գիտական ներուժի դերը և նշանակությունը երկու երկրների ոլորտային համագործակցության համար: Հայկական կողմը խոստացավ կրթության ոլորտի վերաբերող ծրագրերը փոխանցել ՀՀ կրթությյան և գիտության նախարարություն և աջակցել երկողմ իրականացվելիք ծրագրերին:

Այնուհետև հայկական պատվիրակությունը հյուրընկալվեց Իրաքի առողջապահության նախարարությունում, որտեղ հանդիպում ունեցավ առողջապահության նախարարի տեղակալ դր. Հազեմ Աբդելռզակ ալ-Ջումայլիի հետ: Երկու կողմերն էլ կարևորեցին թվային տեխնոլոգիաների ներմուծման կարևորությունը առողջապահության ոլորտում՝ այն ավելի վերահսկելի դարձնելու և կատարելագործելու համար: Պատվիրակության կազմում ընդգրկված <<Ինսքոփ>> կազմակերպության ներկայացուցիչները հնարավորություն ունեցան ներկայացնել իրենց փորձը տարբեր երկրներում էլեկտրոնային առողջապահության համակարգերի ներդրման վերաբերյալ: Կոմերը քննարկեցին ներկայացված առաջարկները և պայմանավորվածություն ձեռք բերեցին առաջիկա համագործակցության հետ կապված:

Հաջորդիվ տեղի ունեցավ երկու երկրների բարձր տեխնոլոգիական ոլորտը համակարգող գերատեսչությունների կողմից կազմակերպված բիզնես ֆորումը, որի շրջանակներում Իրաքի գործարարներին հայկական պատվիրակության անդամները ներկայացրեցին հայկական ընկերությունների հաջողված փորձը, գիտելիքները, գրանցած հաջողությունները, այլ երկրներում ծավալած գործունեությունը: Ֆորումի շրջանակներում հաստատվեցին բիզնես կապեր պատվիրակության անդամներից «Արփինեթ» ընկերության և իրաքյան « Ալի ալ Շեյկե» ընկերության հետ, հայկական «Քուալթի թեսթինգ լաբի» և «ԱԼ ա Վասթ» ընկերության, հայկական «Payandgo» և իրաքյան «Zaine» կազմակերպությունների միջև:

Հունիսի 19-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը և նրա գլխավորած պատվիրակությունը մեկնել են Իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլ, որտեղ հանդիպեցին փոխվարչապետ Քուբադ Թալաբանիի, կապի, կրթության և լուսավորության, առողջապահության ոլորտները համակարգող նախարարների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են ՀՀ կառավարության առաջնահերթությունները բարձր տեխնոլոգիական ոլորտում, նորաստեղծ նախարարության ուղղություններն ու առաջիկա ծրագրերը: Գեղամ Վարդանյանն ընդգծել է հայ մասնագետների ունեցած մեծ ներուժը՝ սկսած դեռևս խորհրդային տարիներից, արհեստական բանականության, ռադիոֆիզիկայի, միկրոէլեկտրոնիկայի բնագավառներում: Անդրադարձ է եղել ստարտափների գործունեության, թվային օրակարգի ձևավորման, տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ուղղություններին: Հանդիպումներ կազմակերպվեցին բարձրտեխնոլոգիական ոլորտը համակարգող ներկայացուցիչների հետ: Հայկական պատվիրակությունը հնարավորություն ունեցավ ներկայացնելու իրենց ընկերությունների կողմից արտադրվող ՏՏ պրոդուկցիան: Հանդիպման շրջանակներում ձեռք բերվեցին համագործակցության մասին

պայմանավորվածություններ «Payandgo» ընկերություն և իրաքյան հեռախոսային օպերատորների միջև:

8.**Ակնկալվող արդյունքները.**

Այցի շրջանակներում հնարավոր եղավ իրաքյան կողմին ներկայացնել հայկական SS պրոդուկցիան և ավելի հանգամանալիորեն ծանոթացնել հայկական գիտական ներուժի հետ: Պատվիրակության կազմում ընդգրկված մասնավոր հատվածի ներկայացուցիչները ձեռք բերեցին բիզնես կապեր և անհրաժեշտ պայմանավորվածություններ իրաքյան մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ՝ նպատակ ունենալով մոտ ժամանակներում համագործակցել ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում:

9.**Ստորագրությունը, ամսաթիվը.**

26.06.2019